ԵՐԵՎԱՆԻ
ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ
ԱՅԳԻ

Ե4-119-2023
27.12.2023թ.

«ՖՈՏՈՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ն. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ
/ՀՀ, ք. Երևան, Ռոստոմի 58, հեռ.՝ +37477556077/

Հարգելի պարոն ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի /այսուհետ նաև՝ Այգի/ կարիքների համար 2022 թվականի նոյեմբերի 21-ին հայտարարված սննդամթերքի և կերերի ձեռքբերման ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում 5, 6, 8, 10, 16, 17, 18, 19, 21, 23, 25, 26, 27, 28, 29, 30, 32, 35, 36, 40, 42, 44, 45, 50, 54, 56, 72, 74, 75-րդ չափաբաժինների մասով, որպես ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 90036001, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ռոստոմի 58, հեռ.՝ +37477556077, էլեկտրոնային հասցե՝ ms.foton2014@mail.ru), որի հետ 05.01.2023թ-ին կնքվել է ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-6 ծածկագրով ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի շրջանակներում, հետագայում՝ ֆինանսական միջոցների հատկացմամբ պայմանավորված՝ 13.01.2023թ-ին կնքվել է նաև ֆինանսական միջոցների հատկացման և վճարման ու գնման ժամանակացույցների հաստատման համաձայնագիր:

Այգու կողմից, նշյալ համաձայնագիրը հաստատելուց հետո, սահմանված կարգով՝ ծանուցմամբ՝ «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ին են ներկայացվել մատակարարման պատվերներ-հայտեր՝ սահմանված և հաստատված ձևաչափով, որոնց շրջնակներում «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ն մատակակարարումները ի սկզբանե կատարել է պատշաճ ձևով, սակայն 01.12.2023թ-ին «Ֆոտոն» ՍՊԸ-ի տնօրեն Նելլի Պետրոսյանից ստացված ծանուցում-գրության համաձայն, վերջինս տեղեկացրել է, որ 2023 թվականի նոյեմբերի 24-ին թիվ 58229023 քրեական վարույթի շրջանակներում «Ֆոտոն» ՍՊ ընկերության գրասենյակում կատարվել է խուզարկություն, որի ընթացքում ի թիվս այլնի առգարվվել են նաև «Ֆոտոն» ՍՊ ընկերության կնիքը և հաշվապահական հաշվառման բոլոր փաստաթղթերը, որպեսզի պայմաններում ամբողջությամբ անհնար է դարձել պայնագրերով նախատեսված ապրանքների մատակարարումը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ նշյալ օրվանից ի վեր «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից չեն մատակարարվել Այգու կողմից պատվեր-հայտով ներկայացված ապրանքները, իսկ Այգու կարիքների համար այդ ապրանքների ձեռքբերումն ունի կենսական նշանակություն, իսկ մատակարարումների ոչ պատշաճ իրականացումը կարող է հանգեցնել

ՀՀ, Երևան 0025,
Մյասնիկյան 20
+374 10 562 362
www.zoo.am
info@zoo.am

կենդանատեսակների հյուծվածության, ինչպես նաև՝ անկումների և ամբողջովին խաթարել Այգու գործունեության բնականոն ընթացքը, Այգու կենդանիների կերակրման առաջնահերթությամբ և հրատապությամբ պայմանավորված, «Ֆոտոն» ՍՊԸ-ի հետ կնքված ապրանքի մատակարարման ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-6 ծածկագրով պայմանագիրը չմատակարարված քանակությունների մասով միակողմանի լուծվել է:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ձեր կողմից սահմանված կարգով Պայմանագիրը ստորագրելուց ներկայացվել են որակավորման և պայմանագրի կատարման ապահովումներ՝ միակողմանի հաստատված տուժանքների տեսքով, համապատասխանաբար. որակավորման ապահովում՝ 6,307,950.00 (վեց միլիոն երեք հարյուր յոթ հազար ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամի չափով, որը չմատակարարված քանակությունների մասով ստացվում է՝ 725,773.50 ՀՀ դրամ և պայմանագրի կատարման ապահովում՝ 4,205,300.00 (չորս միլիոն երկու հարյուր հինգ հազար երեք հարյուր) ՀՀ դրամի չափով, որը չմատակարարված քանակությունների մասով ստացվում է՝ 483,849.00 ՀՀ դրամ: Նշյալ գումարները՝ չմատակարարված քանակությունների մասով պետք է գանձվեն «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ից:

Վերոնշյալի վերաբերյալ Այգին դիմել է Ձեզ սպասարկող բանկին՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ին:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ վճարումների չկատարման դեպքում Այգին վերոգրյալի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

Հարգանքով՝
«ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀՈԱԿ-ի ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ՝

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ